

«Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»

պետական ոչ առևտրային կազմակերպություն

“Հաստատում եմ”

ՎՊՄԻ-ի ռեկտոր, բզդ

_____ **Գ.Կ.Խաչատրյան**

“_16_” __09__ 2010թ.

**Կրթական բարեփոխումների և կապերի բաժնի գործունեության հայեցակարգային
ղրույթները և աշխատանքի հիմնական ուղղությունները**

Քննարկվել և հաստատվել է

ՎՊՄԻ-ի գիտխորհրդում

Արձանագրություն թիվ _7__

“_16_” __09__ 2010թ.

Մուտք

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում ընթանում են բարեփոխումներ, որոնցում ներգրավված են ինչպես հանրակրթական դպրոցների համակարգը, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատությունները: Այդ բարեփոխումները ուղղված են 21-րդ դարի հասարակության լիիրավ անդամի՝ մարդու, քաղաքացու, մասնագետի կերտմանը:

Հանրակրթության ոլորտում այդ բարեփոխումների փուլերից մեկի արդյունքում կատարվեց անցում 12-ամյա կրթության, կատարվեցին նաև բովանդակային մի շարք փոփոխություններ՝ նոր ուսումնական ծրագրերի, դասավանդման նոր մեթոդների, գնահատման նոր համակարգի ներդրում և կիրառում և այլն:

Բարձրագույն կրթության ոլորտում այդ բարեփոխումներն իրականացվում են Բոլոնյայի գործընթացի համատեքստում՝ մեր երկրի բարձրագույն կրթությունը Եվրոպական ընդհանուր կրթական տարածքում ներգրավելու նպատակով: Համաձայն Բոլոնյան գործընթացի հիմնական դրույթների՝ ներկայումս Հայաստանի բուհերում, այդ թվում նաև ՎՊՄԻ-ում, կրթությունն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրիատ-մագիստրատուրա: Սկսած 2008-2009 ու.ս. տարվանից՝ ՎՊՄԻ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվել և իրականացվում է կրեդիտային համակարգի հիման վրա:

Բարձրագույն կրթության բարեփոխումների ներկայիս փուլը ևս համապատասխանում է Բոլոնյան գործընթացի հիմնական դրույթներին և կապված է կրթության որակի ապահովման համակարգի ստեղծման և ներդրման հետ, ինչը ենթադրում է ուսումնական գործընթացում որակի միջազգային չափանիշների ներդրում՝ ներբուհական որակի համակարգի ստեղծմամբ:

Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքներից է նաև ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության ապահովումը, ինչը ենթադրում է արտաքին կապերի ընդլայնում և խորացում: Արտաքին կապերի զարգացման անհրաժեշտությունը բխում է նաև ՎՊՄԻ-ի զարգացման ռազմավարական պլաններից: ՎՊՄԻ-ի համար այդ կապերի կարևորագույն ոլորտներից մեկը «բուհ-դպրոց» կապերն են, ինչը պայմանավորված է ինստիտուտի՝ մանկավարժական կադրեր պատրաստելու առաքելությամբ:

Սակայն հարկ է ընդունել, որ կրթական ոլորտի տարբեր մակարդակներում մինչև օրս իրականացվող բարեփոխումները հանգեցրել են այնպիսի իրավիճակի, որ նախկինում միմյանց հետ փոխկապակցված «բուհ-դպրոց» համակարգը այլևս չի գործում՝ հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերը իրականացնում են բարեփոխումները զուգահեռաբար և փոխադարձաբար տեղեկացված չեն կրթության համակարգի տարբեր աստիճաններում կատարվող փոփոխությունների մասին: Ստեղծված իրավիճակը բացասաբար է ազդում մանկավարժական բուհի վերջնական նպատակի՝ ժամանակակից հասարակության պահանջմունքները բավարարող արհեստավարժ մանկավարժական կադրերի պատրաստման գործին:

Հաշվի առնելով վերը շարադրածը՝ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի կրթական բարեփոխումների և արտաքին կապերի բաժնի գործունեության հիմնական ուղղություններն են.

Կրթական բարեփոխումների բնագավառում՝

1. ՎՊՄԻ-ի զարգացման ռազմավարական պլաններով նախանշված կրթական բարեփոխումների գործառույթային և բովանդակային ապահովումը,
2. Եվրոպայում և ԱՊՀ երկրներում իրականացվող կրթական բարեփոխումներին նվիրված տեղեկատվական-վերլուծական նյութերի նախապատրաստում և ներկայացում՝ ՎՊՄԻ-ի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի, աշխատակիցների, ուսանողների իրազեկման նպատակով,
3. մասնակցություն ՎՊՄԻ-ի կրթության որակի ապահովման և կառավարման ներքին համակարգի ստեղծման աշխատանքներին՝ կրթական բարեփոխումների բաժնի գործառույթների շրջանակներում:

Արտաքին կապերի բնագավառում.

1. Արտաքին կապերի խորացում և ընդլայնում՝ հաշվի առնելով Բոլոնյան գործընթացի դրույթներով նախանշված դասախոսների և ուսանողների շարժունության ապահովումը,

2. Գործուն կապերի հաստատում ՀՀ այլ բուհերի հետ՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող կրթական, գիտական, հասարակական ծրագրեր (այդ թվում նաև դրամաշնորհային) իրականացնելու նպատակով:

3. Կապերի հաստատում ՀՀ-ում գործող ընկերությունների հետ՝ ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների արդյունավետությունը բարձրացնելու, ՎՊՄԻ-ի շրջանավարտների համար աշխատաշուկայի հնարավորություններից օգտվելու, գործատուների հետ հետադարձ կապերի ապահովման նպատակով:

4. Կապերի խորացում և ընդլայնում տեղական ինքնակառավարման մարմինների, հանրապետական և միջազգային կազմակերպությունների տարածաշրջանային գրասենյակների հետ՝ մարզի զարգացմանն ուղղված ծրագրերում ՎՊՄԻ-ի ուսանողներին և աշխատակիցներին ընդգրկելու նպատակով:

5. Համագործակցություն մարզային համապատասխան կառույցների հետ՝ մարզի տնտեսական, արդյունաբերական, սոցիալ-մշակութային ոլորտի զարգացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով:

Ղպրոց-բուհ կապերի ոլորտում.

1. Կայուն կապերի ստեղծում՝ ՀՀ բարձրագույն կրթության և հանրակրթության ոլորտներում ընթացող բարեփոխումներին ինստիտուտի և դպրոցների աշխատակիցներին ծանոթացնելու, այդ բարեփոխումների համատեքստում գործունեության ընդհանուր եզրեր գտնելու նպատակով:

2. ՎՊՄԻ-ի մասնագետների մասնակցության ապահովումը միջնակարգ և ավագ դպրոցների ուսումնական գործընթացներում (առարկայական մեթոդիավորումների աշխատանքներ, ցուցադրական և բաց դասերի անցկացում)՝ բարձրագույն մանկավարժական կրթության ծրագրերը ժամանակակից դպրոցի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով:

3. ՎՊՄԻ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնների մասնագետների գործուն աջակցությունը դպրոցների համապատասխան մասնագետներին և ծնողներին՝ դպրոցական տարիքի երեխաներին վերաբերող տարբեր խնդիրների լուծման գործում:

4. ՎՊՄԻ-ի մասնագետների աջակցություն՝ աշակերտների մոտ տրամաբանական մտածելակերպի, ստեղծագործական ընդունակությունների, հետազոտական բնույթի աշխատանքներ կատարելու ունակությունների զարգացման գործում:

5. Աջակցություն աշակերտությանը՝ առողջ ապրելակերպի ձևավորման գործում:

6. Աջակցություն դպրոցականներին և նրանց ծնողներին՝ մասնագիտական կողմնորոշման հարցում:

7. Աջակցություն դպրոցականներին՝ բուհի ընդունելության քննություններին նախապատրաստվելու գործում:

8. Աջակցություն մարզի ուսուցիչներին՝ բարձրագույն կրթության ոլորտում ընթացող բարեփոխումներին ծանոթացնելու նպատակով:

9. Աջակցություն մարզի ուսուցիչներին՝ կրթության բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման գործընթացներում:

10. Փորձի փոխանակում ուսուցիչների և բուհի դասախոսների միջև՝ ընթացող բարեփոխումները փոխադարձաբար ընկալելի դարձնելու նպատակով: